

պատճառաւ, և թէ՛ որովհետեւ այս գրութիւնն շատ տեղ կը բռնէ և թէ՛ միանգամայն շատերուն համար դիւրին չէ այն զանազան իրական և այլարանական իրերը գծագրել և նկարել, սկսաւ պարզագոյն ձեւն վերածուիլ, յորում իրենց ոչ ամբողջ ձեւը, այլ միայն գլխաւոր գծերն կ'երևնային, և այս ձեւ Շամբոյլիոն կոչեց սրբազան գրութիւն. յետ ժամանակաց քաղաքական և մասնազգրական պիտոյից համար՝ դեռ

աւելի պարզ և աւելի դիւրընթեռնիլ ձևի վերածուեցաւ Շարաքայ և Տա. հրակուայ թագաւորութեան ժամանակէն սկսեալ (բայտ կարծեաց Մաս. բերոյի), որ և սովորական և ժողովրդական գործածութեան պատճառաւ Դիւնուսիկեան, այսինքն ժողովրդա. կան ըսուեցաւ: Այս յետին տեսակ գրով գրոյմուած է Ռոգեղոսայի արձա. նազրութեան միւս սիւնն, ինչպէս պա. պիրներու մէջ ալ կը հանդիպի:

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Կ Ո Ս Ս Ա Ն Դ Գ Օ Ք Լ Է Ն

(Տէս էջ 161)

Դ

Որ ինչ 'ի թատերաբեմն կը տեսնուի՝ Գօքլէն քան զայն տգեղագոյն է 'ի բնէ, կամ լաւ ևս ըսելով՝ օտարօտի դէմք ունի: Եթէ դը առաջին անգամ տեսնէ զինքն արևու լուսով իւր տան մէջ, իսկոյն յապուշ հարեալ կը մնայ իւր տաղանդին մեծութեան և գուսայ նական բնածին ձրից վրայ, որովք՝ հանդերձ իւր գրեթէ անհեթեթ և անկանոն գծագրութեամբն՝ կըցաւ յա. ջողիլ և յաղթանակել:

Լայնանիստ և գիրուկ երեսն՝ ճշմարիտ դիմակ մ'է վաղիմի ինդկատակաց. հոյանտացի վաճառականի նման զեղնագոյն է մորթը. մեծ քթի մը վրայ սակաւ ինչ շարածճի աչքեր կը փալփիլին՝ նման կուզի խորշագոյն աչաց. իսկ քիթն՝ անմասն յանդգնութեամբ այնքան 'ի վեր կը նայի, որ ունգունքն որսի հրացանի կրկին փողոց ծակերուն նման տնկուած են. բերանն մեծ է՝ ամենաթանձր և սեղա, նաձև շրթամբք, որովք թուի իմն թէ հանապազ տաճկական մեծ ծխաբարշ

մը կը ծծէ. երկայն և դուրս ցցուեալ կզակ մը՝ առիւծանման կրկին ծնօտիւք, որք 'ի խօսելն կ'ընդլայնին: Այս անմօրուս գրութիւն, նման աղբերաց ճակատը դրուած մարմարեայ զլիտոց, որ սև գտակաւ մը ծածկուած է, զիւր կարճ և ստուար մարմնոյ մը վրայ, որ ցմէյն ամփոփեալ է սեզմ թխագոյն հանդերձիւ, և սեաւ կօշիկ յոտան և սևաթոյր հողաթափք, և երևակայէ թէ ինչ տարօրինակ խոռոնուրդ մի մէջ տեղ կ'երևէ, այսինքն կէս մի՝ գիւղի ժողովրդապետ մը տան զգեստով, կէս մի՝ 'ի սուգ համակեալ խոհակեր մը, և այլ կէս մի՝ շրջող հագներգու մը, որ է ըսել՝ ասոնցմէ ձևացած նորատեսիլ անձ մը: Երբ մտածէ մարդ թէ սա գաճաճն զմեզ յարտասուս շարժեց, սարսուեցուց և դողացուց՝ շուարած կը մնայ, մինչև փորձութիւն իսկ կու գայ ըսելու առ նա թէ՛ մարդիկ ծաղրելու կերպն այս չէ:

Սակայն այն տգեղ անձանցմէ է Գօքլէն, որ զմարդ կը հրապուրեն. քանզի թերևս, ինչպէս առակ է ըսել, անոնց տգեղութիւնը թերի զեղեցկութիւն մ'է. ինչպէս կը լսուին երբեմն

անճաշակ փոխաբերութիւնք, որք մեծ իմաստ մը կը պարունակեն ընդ ա. դոտս: Ըսածս կը ճշմարտի առաւելա. պէս երբ կը ծիծաղի. աւելի կայտառ, աւելի ծաղրաշարժ և աւելի յանկու. ցիչ ծիծաղ կարելի չէ երևակայել. — և ոչ է ուրախութեան ծիծաղ. — այլ տեսակ մը խորին և իմաստասիրական խնդակք, որ իւր հոգւոյն մէկ մասնա. ւոր զգացումներ կրնայ համարուիլ. և հազարումէկ բերկրալիբ գաղափար. ներ կը զարթուցանէ մեր մտաց մէջ, և բազմադիմի կատակաբանութիւնք՝ առանց բերնով ըսելու՝ գուշակել կու տայ մեզ. և նախածանօթ զուարճալի անճանց և իրաց վրայ ստուերօրէն մտածել կու տայ. ծաղր՝ որ ներքնա. պէս կը զուարթացնէ, և կը շարժէ զմարդ ձեռք ձեռքի շփելու, կամ դե. բասանին փորին ապտակիկ մը տալու:

Ամբողջ երեսն՝ մինչև անգամ ա. կանջներն 'ի միասին կը ծիծաղին. բե. րանն այնքան զուարճալի ձևով կը բու. լորի, որ մարդուս խնքը կը փչէ մաս մը ներս մխելու որպէս զի տեսնէ, ինչպէս կ'ըսէ հեղինակ մը. և քթին ծայրն զուարճածիծաղ երևութիւ ե. րագագոյնս կը շարժէ, ինչպէս թէ մա. տի ծայրիւր վարէն զէպ 'ի վեր բան մը քերէիք. մինչդեռ այքերէն սատա. նայի խորամանկութիւն կը փայլատա. կէ: Բարեսէր քննադատք կ'ըսեն թէ կատարեալ կատակերգական կերպա. րանք ունի, դէմք մը յիսպիկ կա. տակերգակ, Տիճադոյեկ հունձարեղ, և այլ նման բացատրութիւնք, որք թէ. պէտ ստոյգ են, այլ ոչ անոր բովան. դակ նկարագիրն: Ի մտուստ այնքան նորօրինակ և ծաղրաշարժ կերպարանք ունի, որ փոխանակ խօսիցն մտիկ ը. նելու՝ առջի բերան դէմքը նայելու և զննելու ուչ կը դնէ մարդ, իւր տգե. զութիւնը ինքն իսկ չուրանայ, այլ ընդ հակառակն յաճախագոյնս կը խօ. սի իւր վրայ՝ ծաղրելով՝ իրիւ թէ զայլ ոմն ծաղրաբանէր. և երբ երեսաց գե. ղեցիութիւն պահանջող մասեր առա. ջարկուին իրեն, կը մերժէ: Այս պատ.

ճառաւ է՝ որ վերջերս Ատամ տիկնոջ Գալատեայի մէջ Պիկմալիոնի մասնը յանձն չառաւ ձևացնել. — ախնչպէս կ'ուզես, ըսաւ ցտիկինն, որ ես յան. դըղնիմ՝ հասարակաց ներկայանալ ի. բրև Պիկմալիոն, որոյ գեղեցկութիւնն 'ի պատմութենէ աւանդեալ է: Ըսէ ինձ, տիկին, քիթս արդեօք յունական է: — Արդարև իւր դերասանական ընթացից մէջ դժուարագոյն արգելքն որ բռնադատուեցաւ յաղթելու՝ քիթն եղաւ: Անոր համար գերի մը մէջ չյա. ջողած ատենը, իսկոյն պատճառ կը դնէ իւր քիթը:

Նոյն իսկ իւր տան մէջ քառորդ մը հետն խօսելէդ յետոյ, կը փոխուի յայս քո և այլ ոմն Գօթլէն կը գառնայ, ինչպէս 'ի թատերաբանս. Իւր խօսա. կցութիւնն հանճարեղ և հրապուրիչ է, պահելով միշտ բնականութիւն, ինչ. պէս արտասանութեան մէջ: Զուարճա. լի է զԳօթլէն իւր եռանկիւննաձև փո. քրիկ գրասենեկին մէջ տեսնելն՝ չոր. ըրող յարկին մէջ, որ թատեր խղիկի մը գաղափարն կու տայ. լի է դա գրե. նօք յորս առաջին կարգը կը բռնեն ամէն ազգաց թատերական և քնար. երգակ բանաստեղծք: Եւ խօսելու և շարժելու ատենն՝ կը լսես և կը տես նես երբեմն երբեմն Մաւրաքիյի, Կռէնկուռառի, Ֆիկլառայի, և Կրեմո. նացի վնագործիկ փոքր կուզիև խօսե. լու կերպն և ձևերը, որոց ծափահա. րութեանց արձագանգօքն թնդաց Գոռ. նէյլի և Մօլիէռի թատրոնը:

Իւր խօսակցութեան զլխաւոր նիւ. թերէն մին է Մօլիէռ, որոյ ամբողջ կատակերգութիւնքն յիշողութեանը մէջ ամփոփեալ ունի. և ստէպ կը յեղ. յեղէ այն հրապուրակական ճառախօ. սութիւններն որ ըրաւ վերջերս, ցուցը. նելու համար թէ Մարդատեսց (Le Misanthrope) կատակերգութեան Ալ. կեստուր՝ բնութեամբ լուռ և մտա. խորհ անձ մը չէ, որ է ըսել՝ քիչ շատ գաղղիացի Ամէէդ մը, ինչպէս գրեթէ ամենայն քննաբանք և դերասանք ըմ. բըռնած են, որ պէտք ըլլայ նորակերպ

և անսովոր ընաւորութեամբ 'ի տեսաւրան հանել զնա. ընդ հակառակն ակնյայտնի կատակերգական անձ մի է, Մօլիէռի այլ անձանց պէս, և թէ հեղինակն այնպիսի եղանակաւ արտայայտած է զայդ, որ ամէն տարակուսանք պէտք է փարատին:

Իւր այս գաղափարն առանց վարդապետական պերճանաց, մտայարմար պատճառաբանութեամբք և մեծաւ պարզութեամբ բացատրեց, 'ի ձեռն բաղդատութեանց և աստի անտի հաւաքեալ վկայութեանց, զորս մեկին պարզաբանեց 'ի հաստատութիւն իւր կարծեացն. այլ այսու հանդերձ չկարաց համոզել զբազէտներն և դերասանքը: Մասնաւորապէս գրագիտաց վրայ գանգատեցաւ կէս մը ծանր կէս մը լուրջ դիմօք, քթին ծայրն երերցը, ներլով. « Իրաւունք չունիս, կ'ըսեն ինձ որովհետեւ լոկ դերասան ոմն ես: Այդ է որ զիս կը դժկամակեցընէ. թող համարձակօրէն ըսեն ինձ թէ Իրաւունք չունիս՝ որովհետեւ ապուշ ոմն ես, զայս աւելի սիրով յանձն կ'առնում: Քանզի ես ընդ հակառակն դերասան ըլլալուս պատճառաւն է՝ որ կ'ուզեմ իրաւունքս ըսել: Թուի ինձ թէ կատակ երգութեան անձի մը սեփական դրոշմը դասելու և որոշելու իրաւունք և կարողութիւն կրնայ ունենալ նա, որ ընդ ամս քսան անընդհատ՝ այլոց կերպարանքը մտնելու վարժութիւն ըրած է և անոնց ամենայն գործոց և խօսից ներքին պատճառաց մէջ թափանցելու աշխատած: Եթէ թատերախաղից շահադէտ մատենագիրքն սակաւ ինչ չզսպուէին 'ի նիւթական փորձոյ գուսանացն, որք մարմին և կերպարանք պիտի տան անոնց ստեղծած և միակերպ խորամուխ աշխատանք նրբացուցած անձանց, հետզհետէ այնքան վերաշուական բարձրութեան պիտի հասցընէին զանոնք, որ մարդկութենէ ելնելով՝ երկնային մարդիկ պիտի դառնային դոցա արարածքն, և այն ատեն պիտի չգտնուէր դերասան որ կարողանար կերպարանել յիշեալ անձինքն:

Թատրոնին վրայ »: —

Եւ միանգամ Մօլիէռի վրայ խօսք բանալէն ետքը, յաւիտեան չէր լինջընէր, եթէ չըլլար այլ ոմն, որ հաւասարապէս հիացումն ազգած է իրեն: Եւ այդ անձը՝ է նոյն ինքն կամպէզա, 'ի շնորհս որոյ անտարբեր և անզգայ չէ քաղաքագիտութեան ընթացից, որով և առիթ տուաւ Ֆիկաշայ լրագրին՝ իւր վրայ ծիծաղելու: Կամպէզա իւր մտերիմ բարեկամն է, ամէն կիւրակէ անոր հետը կը ճաչէ, և հետը միայնակ երկարապոյնս կը շրջագայի: « Ի՞նչ գիտէ՝ թերևս այս շրջագայութեանց ժամանակ արտասանութեան դաս կ'առնու. և կամ թերևս մարդկանց սրտերն յուզել և հետագոտել կ'ուսուցանին իրարու, մին թատեր համար և միւսն քաղաքագիտութեան ասպարիզին մէջ ծառայեցընելու դիտմամբ. քանզի երկուքն ևս որիչ որիչ տեսարանաց վրայ Գաղղիոյ արդի մեծագոյն դերասանքն են: Մեծ է կամպէզայի ազդեցութիւնը, այլ Գօբլէն առաւել քան զնա ապահով է չսուլուելու:

Իւր համբաւաւոր բարեկամին վրայ ջերմ զարմանօք խօսեցաւ Գօբլէն, առանց ընտանեկան համարձակութեան, անոր վերջին ճառին կտորներ մէջ բերելով, և երբեմն երբեմն գոչելով. — « Լսեցէք այս հատուածին գեղեցկութիւնը, լսեցէք այս խորհրդածութեան ճշդութիւնը »: — Իբրև թէ Ռասինի հատուածի մը վրայ ճառէր: Եւ կամպէզայի վրայ խօսուած ատենն, Վօլդէռ լրագրոյն առ Էնդաւանսիժան տուած երկար պատասխանն ընթերցաւ անհնարին պրագութեամբ և զարմանահրաշ մաքուր հնչմամբ, մասնաւոր բառեր թրթռացընելով, և մասնաւոր դարձուածներ դուրս ցատեցընելով: աչաց մին երբեմն խաղցընելով և զընթեռնան միմոսակերպ շարժելով. այնչափ որ մարդ կը ցաւի թէ ինչպէս չկրնար ընթերցողի պաշտօն տալ Գօբլէնի իւր տան մէջ հարիւր հազար ֆռանգ տարեկան թոշակաւ. վասն

զի գրագէտ մը այս գումարը տուած ատենն այդպիսի ընթերցողի՝ հարիւրին յիսուն շահեցուցած կ'ըլլայ իւր դրամագլուխը, այսինքն իւր տաղանդը, նշանաւոր իսկ է նաև իւր խօսակցութեան լեղուն, զօրեղ և ճոխարան՝ խառնեալ ժողովրդական քանի մը դարձուածներով, ի անսովոր ոճերով և թատրոնական մթաբանութեամբք. և բազմազան է, ինչպէս այն ամէն անձանց խօսակցութիւնն՝ որ 'ի բնէ կատակերգական տաղանդով օժտեալ են, և պատմելու, նկարադրելու և ուրիշ նմանութիւնն ընելու 'ի ներքուստ մղումն կը պգան:

Բովանդակելով ըսածնիս, բարեսիրտ և բարեմայն բնաւորութեան անձի զազափար կու տայ: Արդէն ըստ իմ կարծեացս, այն ամենայն դերասանք որ հաւասարազօր ճարտարութեամբ բարե և չար անձանց բնաւորութիւնը կը կերպարանեն, պէտք է որ 'ի բնէ բարի ըլլան. որովհետև թէ զմին և թէ զմիւր վարպետութեամբ ձևացընելու համար՝ պէտք է որ բարի բնաւորութիւնը տիրող ըլլայ 'ի նոսա, առանց որոյ կրնան ազանդի օգնութեամբ շլացրնել զունկնդիրս, այլ ոչ և գերել համակրութեամբ:

Թէպէտ Գօբլէն բարի անձին նշաններն ունի, այլ ոչ ամենակալուող մարդու: Իւր ծաղրարար բարեսրտութեան տակ կը նշմարուի նաև ազգու և հաստատամիտ բնութիւն մը, որուն հետ շատ գիւրին պիտի չըլլայ կարծեմ վարուիլն՝ դժկամակրութեան օրերն: Մանաւանդ երբ գլուխն տաքցած՝ կը ճոխարանէ ընդդէմ թատերաբան հեղինակաց ոմանց ինքնակամ և բռնամիտ նորութեանցն, այնպիսի խոժոռ աչօք կը նայի, և ձայնն այն կերպ կը ճէ, որ բնաւ տարօրինակ չթուիր այն վայրկենին՝ թէ Սէմօն Գքսին դժոխային հոգին կրցած ըլլայ հիանալի կերպով յանձին կերպաւորել:

Ե

Ըստ հասարակաց և ըստ Գօբլէնի կարծեաց, իւր գուսանութեան առաջին օրէն մինչև ցայսօր, Արքայոյն և կենդանազոյն եղանակաւ հանդիսացուցած դերը ժամանակակից թատերախաղից մէջ եղած է Սէմօն Գքսինի դերը Տիւմայի Օտարագրի Տիկիին (L'Étrangère) թատերախաղին մէջ: Կրած դժուարութիւնը քաջ իմանալու համար՝ բաւական է 'ի յուշ ածել իւր յիսպիս կատակերգակ դժգորութիւնն և յիշել միանգամայն որ Սէմօն Գուքսն ազնուականաց դասուն բարձրագոյն կտրզին ծաղիկն է. — անարգ և ատելի որչափ կարես երևակայել, — այլ որչափ 'ի ներքուստ նեխեալ և ապականեալ, նոյնչափ ընդ հակառակն արտաքուստ վայելչայարդար և պերճապատիւ:

Թէպէտ ամենուն համարումն մեծ էր Գօբլէնի տաղանդոյն ճկունութեան վրայ, հանդերձ այսու երկիւղ կար թէ մի գուցէ այս դերին մէջ չյաջողիրնդ հակառակն թատերաբեմին վրայ երևելուն պէս, ծափահարութեան մեծ դղրդմամբ և զարմացման ընդհանուր աղաղակաւ ողջունեցաւ:

Կոստանդ Գօբլէն, անզուգական եղանակաւ զՖիկաշոյն և անման կատարելութեամբ կրեւնուացի վնագործիւ կոչվե ձևացընողը, քրիստոնէութեան առաջին ազնուականն կը թուէր: Գունատ էր՝ ախտիք հիւժեալ ազատ ազգոյ մը հիւանդագին տժգունութեամբն, խարտիշագոյն մազերով, սակաւիկ ինչ ճաղատ, աստի և անտի գունոգական ոլորմամբ երկայնեալ թաւ ընչաչքով, միաչեայ ակնոցիւ, պահանջուած վայելութեամբ զգեցեալ, դիւրամատոյց՝ միանգամայն և խստաբարոյ, և յամենայն շարժմունսն, ևս և 'ի կրից սաստկապէս յուգեալ ժամանակը՝ վիսական ազատատոհմութիւն պահելով: Վերկապէս, հեղինակին երևակայածին ճիշդ մարմնաւորութիւնն էր:

Ամէն մէկ տեսարանին, մեծազոյն ազդուութեամբ նշանաւոր հանդիսացաւ: Իւր յափրացեալ կեցուածքը, և յամրալեզու խօսակցութիւնն որ ա. մէն բառ արատբերելուն թուէր իմն չնորհա առնել: պաղ մարդասիրութիւնը, ժպտող և հեգնական նայուածքն, անհոգ ձևերն և բերնէն թուլութեամբ ելած բառերն. այս ամենայն կը յայտնէին գոռոզութեամբ և արհամարհանօք սնեալ և զարգացեալ աղնուպիտականի մը լիբբ ժպրհութիւնն, 'ի մուլութիւնս վատթարեալ հեշտասիրի մը անամօթութիւնը, ա. մէն տեսակ նուստտութիւններ գործելու կարողութիւնը, սուսերամարտի մը զրգռիչ և շարարուեստ յանդրհնութիւնն, որ ապահով է զհակառակորդն սպաննելու. — կ'երևէր նաև իւր առած կրթութիւնը, իւր անցեալը. կը գուշակուէր թէ մինչև որ սահման հասնելու ձեռնհաս էր. կը հասկըցուէր խորհած հազարումէկ բաներն զբոս բերանով չէր արտաբերէր, այլ զբոս մեզի մտածել կու տար:

Մ'անաւանդ թէ մեղմով և մեծաարուեստի ուղղագրից Սէմօնի՝ 'ի Տիւմայէ ճարտարեալ բնաւորութիւնն որ կրնար նողկալի ըլլալ հանդիսատեսից. և ուղղագրութիւնն յայսմ կայացաւ, որ ձևացուցած անձին պաշտօնական պաշտպանն հանդիսացաւ, — հետեւելով հռչականուն իՔլանտ՝ զերմանացի դերասանին հրահանդաց. — սյս. ինքն՝ գուշակել տուաւ ունկնդրաց՝ թէ ինչ կերպով և ինչ ճամբով արգի շար վիճակին հասեր էր Սէմօն, և թէ այսքան թիւրերուն բոլոր յանցանքը իրենը միայն չէր. (որովհետև նախ մ.

լար կրթութիւն մը առած էր, և ապա գտնուած զեղծ և խանդարեալ ընկերութեան շար օրինակօքն ապականեալ էր): Եւ այս կերպով, ոչ թէ սիրելի ներկայացուց զՍէմօն, այլ այն աստիճան միայն ատելի ըրաւ, ուսկից աւելին հանդուրժելի չէ թատեր վրայ և եղծիչ է բանաստեղծին դիտմանը:

Այլ ահաւոր հանդիսացաւ: Զոր օրինակ, չորրորդ հանդիսին մէջ, երբ զժեւար խոնարհեցընել կ'ուզէ, յիշեցընելով անոր թէ մայրը դքսուհոյն հոգաբարձուհին եղած էր, այնպիսի մահացու հեգնութեան ձայն մը հնարեց, և հալեցուցած կապարի կոթիլներու նման խեղճ երիտասարդին սըրտին մէջ այն դառն և լիբբ խօսքերը այնպիսի անգութ զանդալութեամբ ծորեցուց, որ հանդիսականաց սրտից մէջ թափանցեցին այն խօսքերը մի առ մի, և ժեւարի զգալու զայրոյթն 'ի նոսա բորբոքեցին: Նաև ողջ ազգաց հանդիսականաց վրայ այն քարեղէն անտարբերութիւնն, որով լսեց դքսուհոյն սաստիկախայթ թշնամանքն (որով մէն մի խօսք՝ մէն մի ապտակ է) մինչև այն շունթարձակ — Անթրէն — բառը, որուն այլ ևս չհանդուրժելով՝ արիւնն 'ի դլուխն ցայտեց. և մոլեղին ու վայրենի կատաղութեամբ դքսուհոյն վրայ յարձակեցաւ՝ անոր վերջին խօսքերուն, այլ յանկարծական ճգամբ ինքզինքը զսպեց: Գաղղիական թատրանին վրայ չէր եղած մէկն որ առաւելագոյն դիւական ուժգնութեամբ ներկայացուցած ըլլար զամբարտաւանութիւն, զլրբութիւն և զպայրոյթ:

Անբացատրելի է Գօքլենի տարած յաղթանակը: Թատերախաղին սկիզբ

1 ԻՔլանտ (Աւգոստոս Գուլիելմոս), թատերախաղուց հեղինակ և դերասան գերմանացի, ծնաւ 'ի Շանոլը յամին 1789, մեռաւ 'ի Պետլին 1814ին: Յամի 1777 սիսաւ գերտտանութիւն ընել, և ամէն տեսակ դերի մէջ նշանաւոր հանգիսացաւ: Մանչայմի թատրոնին վարիչ գրուեցաւ, և յետոյ Պետլինի արքունեաց թատերական ներկայացմանց ուղղիչ: Թարգմանաց գաղղիանէն Իրգաւի և Սըլբստիցը Տիւլզել կատակերգութիւններ, և իտալական լեզուէ՝ Կօլ

տոնի բազում կատակերգութիւնք: Յօրինեց շատ մը թատերախաղեր, որոց մէջ փափկութեամբ կը նկարագրէ ընտանեկան տեսարանները: այլ տեղ տեղ երկար ճառախօսութեանց կը դառնան իրեն անձանց խօսակցութիւնքը: Գեղեցկագոյնն է Խաղաւորը, որ մեծապէս սիրուած չարժէ է: Իւր թատերախաղուց տպագրութեան մէջ (Վայրցիկ, 1798, 17 հատոր), Յիշատակագրութիւնը ևս հրատարակեց իւր թատերական ընթացից վրայօք:

բէն մինչև ցլերըն՝ ինքն յափշտակեց
հանդիսականաց ուշադրութիւնը, և
այն աստիճանի փայլեցաւ, որ եթէ

միւս գերասանը խաւարած ըլլային,
ինքն միայն ամենուն տեղ բաւական
էր:

Աւարտն միասնագում:

Վ Ի Պ Ա Ս Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Թ Ա Գ Ա Ի Ո Ր Լ Ե Ր Ա Ն Ց

(Տէս էջ 171):

Պ

ՀԱՃԻ ՍԿԱԻՐՈՍ

Տե՛մբարի գէպ յԱթէնս իջաւ, միանձն գէպ
իւր մեղուաց տեղին սկսաւ վեր ելնել, մեր նոր
տեարքն ձգեցին զմեզ ճանապարհի մը մէջ՝ որ
իրենց թագաւորին բանակավայրը կ'առաջնոր-
դէր: Սիմընս տիկինն գիմագարձութեան ցոյց
տուաւ՝ չուզելով քայլափոխ մ'անդամ յա-
ռաջ երթալ: Աւազակքն սպառնացան զինքն ի-
րենց բազկաց վրայ բարձրացուցած տանկու-
նա յայանց՝ թէ պիտի չթողուր որ զինքը տա-
նին, բայց իւր աղջիկն յորդորեց զտիկինն ա-
ւելի զիջողագոյն գանուելու: յոյս տալով՝ որ
պատրաստ սեղան պիտի գտներ և Հաճի-Պաշա-
րոսն հետ նախաճաշէր: Մարիաննա աւելի զար-
մացած էր քան թէ վախցած. ստորակարգեալ
աւազակներն՝ որք բռնեւր էին զմեզ, տեսակ մը
մարգավարութեան ցոյց տուած էին, ոչ զըք
կրկնած էին և ձեռքերնին իրենց գերեակներէն
հեռու բռնած. փոխանակ իրենք զմեզ կողպ-
տելու՝ խնդրած էին որ մենք անձամբ ունե-
ցածնին իրենց յանձնէնք. ուշ գրած չէին որ
տիկնայքն սկանջինն օղբ կը կրէին, և ձեռնոց-
նին սեղամ հանելու ազգ ըրած չէին. որով բո-
լորովն անմասն էին այս աւազակքն Սպանիոյ
և Իտալիոյ մէջ գանուած աւարտառուներէն,
որք մասանի մը ստանալու համար՝ մատը կը
կտրեն, և մարգարտի կամ աղամանգի մը հա-
մար՝ ունկան բլթակը կը փրցնեն: Բովանդակ
մեղի սպառնացուած չարքն՝ փրկանքի մը հա-
տուցման կը վերածուէր, բայց աստի՛ յոյս կար
նաւ ձրի ազատութիւննին սասանալու. վասն զի
ինչպէս կարելի էր մտածել որ Հաճի-Պաշա-
րոս կարենայ աւանդ պատուհան կրելու՝ զմեզ

իր քօղն արգելուլ, մայրաքաղաքէն, արբու-
նիքէն, յունական բանակէն, Իրիտանիոյ թա-
գուհչուն գնդէ մը և անգղիական պատերազ-
միկ հակող նաւէ մը՝ հինգ մղոն հեռաւորու-
թեամբ: Այսպէս կը խորհէր Մարիաննա: Իսկ
ես յակամայս Միսգրայի պզտիկ աղջկանց պատ-
մութիւնը միտքս կը բերէի, և արտում էի: Կը
վախնայի որ չըլլայ թէ Սիմընս Տեկինն՝ իր ազ-
գապան ընդգիծութեամբն, իւր գուտարը մեծ
վտանգի մը ենթարկէ, և կը մտածէի՝ ըստ կա-
րելւոյն շուտով՝ իւր վիճակը իրեն յայանել:
Նեղ ճամբայէ մը իրարու ետեւէն կը քալէինք,
և մեր վայրագ ճանապարհորդակիցք զմեզ մէկ-
մէկէ բաժնած էին: Անվերջանալի կը թուէր ինձ
ճամբան, և տասն անգամէն աւելի հարցուցի թէ
արդեօք շուտով պիտի հասնինք: Անաւոր էր
չորս կողմի տեսարանն. ապաւերկ ժայռն իւր
պտտառուածոց միջէն հազիւ տեղի կու տայր՝ որ
բարձրանայ դաւար կաղնւոյ մացառ մը, կամ
փշալից թիւմի թփիկ մը՝ որ մեր օրունից կը
փակէր: Յաղթող աւազակքն ամենեկն ուրա-
խութեան ցոյց չէին տար, և իրենց յաղթական
ընթացքն՝ յուղորկաւորութեան գնացողաց ե-
րևոյթ ունէր: Մատնաչափ հաստութեամբ զը-
լանիկներ ըլուծեամբ կը ծխէին: Ոչ ոք իւր
ընկերին հետ կը խօսէր. մէկը միայն երբեմն
երբեմն քե՛սոյն երգ մը կը մրմնայր: Աւերա-
կաց նման տխրատեսիլ է այս ժողովուրդս:
Մէտասաներորդ ժամուն միջոցները՝ շան
վայրագ հայուն մը բանակատեղւոյն մտա ըլլա-
նիս մեղի իմացուց. տասն կամ տասուերկու ա-
հագին շներ, մոզիներու նման խոշոր, ոչխար-
ներու պէս գուռը մազերով, սկրանկն ցուցնե-
լով՝ մեր վրայ սկսան վազել: Մեր պաշտպա-
ններն քարի հարուածներով անոնց իմաստերե-
ցին, և քառորդ ժամուս թշնամութենէ վերջը
խաղաղութիւնն տիրեց: Այս հիւրատեսաց քա-